

## ԳԱԼՍՅԱՆ ԳՈՐԱՐ

### ԱՆՈՒՆԴ

Ես ուզում էի անունդ մի օր  
Ավազին գրել,  
Որ մի պահ շողար ավազի վրա  
Ու ջնջվեր իսպառ...

Հետո ուզում էի այդ նույն ավազին  
Ես ծնրադրել,  
Վարսերս սփռել, ու անվանդ հետ  
Խառնվել մի պահ...

...Բայց համարձակ էր գրիչս ավելի՝  
Անունդ հանձնեց ճերմակին թղթի  
Ու տառապանքի իմ տողերի մեջ՝  
Անունդ՝ սիրով իմաստավորվեց...

... Ես ուզում էի մերժել,  
Մոռանալ անունդ, մինչդեռ՝  
Ամեն մի տառը, հնչյունը ամեն  
Խրվել է սեպով շնչափողիս մեջ...

...Մինչ ջանում էի գաղտնիքը սրտիս  
Երբեք չմատնել,  
Հավերժացել էր անունդ արդեն  
Ծայրին մատներիս...

### ԿՐԱԿՈՑ

Մի կրակոց գիշերվա մեջ,  
Մի կայծ, մի բոց,  
Մի շան սրտում բացված մի վերք,  
Արնոտ մի խոց,  
Դաժան մի ձեռք մի հրացան,  
Երկաթե օձ,  
Գիշերվա մեջ մարդը գազան  
Ու կրակոց...